ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2015թ. N 117-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացում ընտրական հանձնաժողովներին աջակցելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությանը, Ստեփանակերտի քաղաքապետարանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերին՝ աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ընտրողների ցուցակները կազմելու և ճշգրտելու համար:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությանը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության (այսուհետ՝ ընտրություն) նախապատրաստման և անցկացման ողջ ընթացքում ապահովել հասարակական կարգի ու անվտանգության պահպանումը, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների և ընտրական տեղամասային կենտրոնների տեղակայման շենքերի պահպանումը, ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու ընտրական հանձնաժողովներում դրանց պահպանումը, ընտրական հանձնաժողովների անդամների բնականոն գործունեությունը.

2) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների կանխման համար՝ համագործակցելով ընտրական հանձնաժողովների հետ.

3) կազմակերպել կալանավորված ընտրողների քվեարկությունը կալանավորված անձանց պահելու վայրերում:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում միջոցներ ձեռնարկել զինծառայողների և զինվորական մասերում հաշվառված ընտրողների ընտրական իրավունքի իրականացմանն օժանդակելու ուղղությամբ:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը՝ <<Արցախէներգո>> փակ բաժնետիրական ընկերության միջոցով՝

1) կոնկրետ միջոցառումներ իրականացնել ընտրությունների նախօրյակին և քվեարկության օրն ընտրական տեղամասերը և ընտրական հանձնաժողովների վարչական շենքերի էլեկտրասնուցումն անխափան ապահովելու ուղղությամբ.

2) էլեկտրամատակարարման համակարգի լիարժեք և անխափան գործունեության համար քվեարկության օրը կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի կենտրոնի վարչական շենքերն ապահովել երկրորդ՝ լրացուցիչ էլեկտրագծով կամ ժամանակավոր տեղադրել հոսանքատու շարժիչներ:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը՝ միջոցներ ձեռնարկել տեղամասային կենտրոններում հակահրդեհային անվտանգության պայմանների ապահովման համար:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ ոլորտի հիմնարկների և կազմակերպությունների միջոցով, մյուս շահագրգիռ մարմինների հետ միասին, կոնկրետ միջոցառումներ իրականացնել ընտրության նախապատրաստման ողջ ժամանակաշրջանում և քվեարկության օրն ընտրության մասնակիցների հանգիստն ու ժամանցը կազմակերպելու ուղղությամբ:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրել համապատասխան տրանսպորտային միջոցներ՝ դիտորդների տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային մարմիններին՝

1) ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար ընտրական հանձնաժողովներին անվարձահատույց տրամադրել անհրաժեշտ շենքեր, կահավորանք, այլ տեխնիկական սարքեր.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով թեկնածուների և համապատասխան ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրել դահլիճներ ու շինություններ նախընտրական քարոզչության համար.

3) իրականացնել համապատասխան կազմակերպատեխնիկական միջոցառումներ և ձևավորել աշխատանքային խմբեր՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված օպերատիվ հարցերի լուծման համար:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ տվյալ շրջանի կազմում ընդգրկված համայնքների, իսկ Ստեփանակերտի քաղաքապետին՝ Ստեփանակերտ համայնքի մասով՝

1) աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ, 16-րդ, 20-րդ և 54-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում համայնքների ղեկավարների կողմից համայնքների տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր հատկացնելու մասին որոշումների ընդունմանը, ինչպես նաև համայնքների ղեկավարների մասնակցությամբ ընտրական տեղամասերի կազմավորմանը, տեղամասային կենտրոնների սահմանմանն ու քվեարկության սենյակների կահավորմանը և այդ մասին ընտրողներին տեղեկացմանը.

2) ընտրական հանձնաժողովներին ապահովել տրանսպորտային միջոցներով՝ հիմք ընդունելով տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված հայտերն ու ժամանակացույցը:

10. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանին՝ ապահովել դատախազության և դատարանների աշխատանքը քվեարկության օրը:

11. Առաջարկել <<Ղարաբաղ Տելեկոմ>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրինությանը՝ միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրական հանձնաժողովների միջև անխափան ու կայուն կապ ապահովելու , ինչպես նաև նրանց կապի անհրաժեշտ ծառայություններ տրամադրելու համար:

12. Առաջարկել <<Ազատ Արցախ>> հանրապետական թերթի խմբագրությանը, <<Հանրային հեռուստառադիոընկերություն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրինությանը՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգին համապատասխան լուսաբանել ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքը,

սահմանված կարգով հավասար պայմաններ ստեղծել թեկնածուների համար՝ նրանց նախընտրական քարոզչությունը կազմակերպված անցկացնելու նպատակով:

13. Սույն որոշման կաբարման վերահսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ